



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 08/19**

18.03.2019թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնը (**այսուհետ՝ Կենտրոն**)՝ քննարկելով Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 310.1-րդ հոդվածի 1-ին մասի և 314.3-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Քաղաքացի Վաչագան Ղազարյանը (այսուհետ՝ Դիմող) 2018 թվականի դեկտեմբերի 13-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով որոշել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 310.1-րդ հոդվածի 1-ին մասին և 314.3-րդ հոդվածին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության Սահմանադրությանը համապատասխանության հարցը:

Դիմողը վերլուծելով ՀՀ քրեական օրենսգրքի վերոնշյալ հոդվածները հանգել է այն հետևության, որ դրանք չեն համապատասխանում ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի առաջին և երրորդ նախադասություններին՝ հետևյալ հիմնավորումներով:

Մասնավորապես՝ թեև Դիմողը մինչև 2018 թվականի ապրիլի 8-ը ներառյալ հանդիսացել է ՔՕ 310.1-րդ հոդվածի 1-ին մասի և 314.3-րդ հոդվածի 2-րդ մասերով նախատեսված հանցակազմերի սուբյեկտ, սակայն օրենքի փոփոխության արդյունքում, 2018 թվականի ապրիլի 9-ից այլևս չի հանդիսանում այդ հանցակազմերի սուբյեկտ, իսկ եթե անձը որևէ պահից դադարում է համարվել հանցակազմի սուբյեկտ, ապա դա նշանակում է, որ այդ հանցակազմը սուբյեկտային մասով ապաքրեականացվել է, հետևաբար՝ հանցակազմի ապաքրեականացումն ունի հետադարձ ուժ, ուստի Դիմողի նկատմամբ ՔՕ 310.1-րդ հոդվածի 1-ին մասի և 314.3-րդ հոդվածի 2-րդ մասերով քրեական հետապնդում իրականացնելը խախտում է ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի երրորդ նախադասությունը:

Դիմողը նշում է, որ թե՛ ՔՕ 310.1-րդ հոդվածի 1-ին, և թե՛ 314.3-րդ հոդվածի 2-րդ մասերով նախատեսված հանցակազմերը նախատեսում են հատուկ սուբյեկտ՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող պաշտոնատար անձ: Իսկ նշված պաշտոնատար անձանց շրջանակը սահմանված է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով:

Այսպիսով՝ վերլուծելով «Հանրային ծառայության մասին» ՀՀ 2011 թվականի մայիսի 26-ի ՀՕ-172-Ն օրենքը և «Հանրային ծառայության մասին» ՀՀ 2018 թվականի մարտի 29-ի ՀՕ-206-Ն օրենքը, որով փոփոխություններ են կատարվել 2011 թվականի

օրենքում, Դիմողը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված վերոնշյալ հանցակազմերը սուբյեկտային կազմով իրեն վերաբերելի չեն:

Մասնավորապես, թեև խնդրո առարկա հանցակազմերի սուբյեկտների կազմը պետք է որոշվի բացառապես 2011 թվականի օրենքի 32-րդ հոդվածով, որով հստակ ամրագրված են հայտարարատու պաշտոնատար անձանց կազմը, այնուամենայնիվ օրենսդրական կարգավորումները 2018 թվականի ապրիլի 9-ից փոխել են հայտարարատու պաշտոնատար անձանց շրջանակը, դրանցից հանելով մի շարք պաշտոնատար անձանց, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության պետական պահպանության ծառայության պետի առաջին տեղակալի պաշտոնը զբաղեցնողին:

Բացի այդ՝ չնայած այն հանգամանքին, որ բարձրաստիճան պաշտոնատար անձինք 2011 թվականի օրենքի մեկնաբանմամբ հանդիսանում են հայտարարատու պաշտոնատար անձինք, այնուամենայնիվ «Բարձրաստիճան պաշտոնատար անձինք» հասկացության բովանդակությունը բացահայտող 2011 թվականի օրենքի 5-րդ հոդվածի 15-րդ կետը, 2018 թվականի օրենքի 54-րդ հոդվածի համաձայն 2018 թվականի ապրիլի 9-ից կորցրել է իր ուժը: 2018 թվականի օրենքով արդեն իսկ նորովի է սահմանվել «Բարձրաստիճան պաշտոնատար անձանց» շրջանակը և ներկայումս՝ 2018 թվականի օրենքի 60-րդ հոդվածի 2-րդ մասով ո՛չ ՊՊԾ պետի, ո՛չ էլ նրա տեղակալների պաշտոն զբաղեցնող անձինք չեն հանդիսանում բարձրաստիճան պաշտոնատար անձ՝ հետևաբար և 2018 թվականի ապրիլի 9-ից ՊՊԾ պետը և նրա տեղակալները դադարել են լինել «հայտարարատու պաշտոնատար անձ»: 2011 թվականի օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասն սահմանում է, որ հայտարարատու պաշտոնատար անձինք են համարվում նաև «հատուկ ծառայությունների բարձրագույն և գլխավոր պաշտոններ զբաղեցնող անձինք» միաժամանակ ամրագրելով՝ որ բացառություն են կազմում ազգային անվտանգության հանրապետական գործադիր մարմիններում ծառայությունների գլխավոր պաշտոններ զբաղեցնող անձինք: Իսկ «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ՀՕ-532-Ն ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն ՊՊԾ պետի տեղակալի պաշտոնն ազգային անվտանգության մարմիններում ծառայողների գլխավոր խմբի պաշտոն է: Ամփոփելով վերոգրյալներն ակնհայտ է, որ Դիմողը 2018 թվականի ապրիլի 9-ից չի հանդիսանում հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ՝ հետևաբար և խնդրո առարկա հանցակազմերի սուբյեկտ:

Անդրադառնալով հանցակազմի սուբյեկտային մասով ապաքրեականացմանը, Դիմողը նշել է, որ օրենսդրական փոփոխությունների հետևանքով ՀՀ քրեական օրենսգրքի 310.1-րդ հոդվածի 1-ին մասի և 314.3-րդ հոդվածի 2-րդ մասերով նախատեսված արարքների մասնակի ապաքրեականացման արդյունքում Դիմողը 2018 թվականի ապրիլի 9-ից դադարել է լինել ՀՀ քրեական օրենսգրքի վերոնշյալ հոդվածներով նախատեսված հանցակազմերի սուբյեկտ, իսկ սուբյեկտի բացակայությունն ինքնին վկայում է հանցակազմի բացակայության մասին, ինչն էլ իր հերթին բացառում է տվյալ արարքի հանցավորությունը և պատժելիությունը:

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ հանցակազմի ապաքրեականացումն ունի հետադարձ ուժ, Դիմողը հայտնել է հետևյալ դիրքորոշումը: ՀՀ քրեական օրենսգրքի 310.1-րդ հոդվածի 1-ին մասի և 314.3-րդ հոդվածի 2-րդ մասերով նախատեսված սուբյեկտների շրջանակի նեղացմանն ու արարքների սուբյեկտային

կազմով մասնակի ապաքրեականացմանը հանգեցրել է վերոնշյալ հոդվածներով հանցակազմերի դիսպոզիցիայի համար հիմք ծառայող բլանկետային նորմի՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ 2018 թվականի օրենքի համապատասխան կարգավորումները: ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածում օգտագործված «օրենք» եզրույթի մեկնաբանությունից հետևում է, որ օրենքի հետադարձ ուժի բացառության կանոնը տարածվում է նաև այն օրենքների վրա, որոնց հղում է կատարվում ՀՀ քրեական օրենսգրքի բլանկետային նորմով, այսինքն՝ բլանկետային նորմով հղում կատարված օրենքի փոփոխության միջոցով արարքի ապաքրեականացման պարագայում օրենքի հետադարձ ուժի սկզբունքը գործում է ճիշտ այնպես, ինչպես այն գործում է հենց քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու միջոցով արարքի ապաքրեականացման պարագայում: Հետևաբար՝ Դիմողը գտնում է, որ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու և այդ փոփոխություններին որպես հանցավորությունը բացառող նոր կարգավորում հետադարձ ուժ տալու արդյունքում 2018 թվականի ապրիլի 9-ից հետո Դիմողը չի հանդիսացել քննարկվող հանցակազմերի սուբյեկտ՝ հետևաբար նրա նկատմամբ չի կարող իրականացվել քրեական հետապնդում:

Անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 314.3-րդ հոդվածի 2-րդ մասին՝ Դիմողը նշում է, որ այն չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի առաջին նախադասությանը հետևյալ հիմնավորմամբ: Դիմողի կարծիքով բացակայում է հանցակազմի ինչպե՛ս սուբյեկտը, այնպե՛ս էլ օբյեկտիվ կողմը, քանի որ տվյալ պարագայում գույքի և եկամուտների հայտարարագիր ներկայացնելու օրվա դրությամբ ինքը չէր բավարարում համապատասխան հանցակազմի սուբյեկտի հատկանիշներին: Մասնավորապես՝ հայտարարագիր ներկայացնելու օրվա դրությամբ Դիմողը չէր հանդիսանում «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով «հայտարարատու», քանի որ Դիմողի համար 2017 թվականի համար հայտարարագիր ներկայացնելու վերջնաժամկետը լրացած է եղել 2018 թվականի մարտի 31-ին, սակայն այդ օրվա դրությամբ փաստացի հայտարարագիր չի ներկայացվել: Հայտարարագիրը ներկայացվել է 2018 թվականի մայիսի 21-ին, այսինքն նշված վերջնաժամկետը լրանալուց, ինչպես նաև 2018 թվականի ապրիլի 9-ից հետո, երբ Դիմողը դադարել է համարվել հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող պաշտոնատար անձ՝ հետևաբար նաև քննարկվող հանցակազմի սուբյեկտ: Այսպիսով՝ Դիմողը գտնում է, որ տվյալ պարագայում իր արարքը դուրս է իրեն մեղսագրված ՀՀ քրեական օրենսգրքի 314.3-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցակազմի շրջանակից:

Վերոգրյալից ելնելով՝ Դիմողը գտել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 310.1-րդ հոդվածի 1-ին մասը և 314.3-րդ հոդվածը չեն համապատասխանում ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածին:

Նշված գործով ՀՀ սահմանադրական դատարանում նիստը նշանակված է 2019 թվականի մարտի 12-ին:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Սույն սահմանադրական վեճի առարկան կազմող խնդրին առնչվող քրեաիրավական կարգավորումները, համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի, հետևյալն են.

Հոդված 310.1. Ապօրինի հարստանալը

1. Ապօրինի հարստանալը՝ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի՝ հաշվետու ժամանակահատվածում գույքի ավելացումը և (կամ) պարտավորությունների նվազումը, որոնք էականորեն գերազանցում են նրա օրինական եկամուտները և ողջամտորեն չեն հիմնավորվում դրանցով, և եթե ապօրինի հարստացման համար հիմք հանդիսացող այլ հանցագործության հատկանիշները բացակայում են՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ:

Հոդված 314.3. Հայտարարագրերում կեղծ տվյալ ներկայացնելը կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելը

1. Հայտարարատու պաշտոնատար անձի, ինչպես նաև նրա ընտանիքի կազմի մեջ մտնող անձի կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հայտարարագրերում կեղծ տվյալ ներկայացնելը կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից երեքհազարապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

2. Նույն արարքը, որը հանգեցրել է առանձնապես խոշոր չափերով գույքի կամ եկամտի չհայտարարագրմանը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից չորս տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի համաձայն՝

Հոդված 72. Հանցագործություններ սահմանելիս և պատիժներ նշանակելիս օրինականության սկզբունքը

Ոչ ոք չի կարող դատապարտվել այնպիսի գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին հանցագործություն չի հանդիսացել: Չի կարող նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը ենթակա էր կիրառման հանցանք կատարելու պահին: Արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ:

Սույն սահմանադրական վեճի շրջանակներում նախևառաջ կարևոր նշանակություն ունի ՀՀ քրեական օրենսգրքի 310.1 հոդվածում օգտագործվող «հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ» և օրենսգրքի 314.3-րդ հոդվածում կիրառվող «հայտարարատու պաշտոնատար անձ» հասկացությունների բացահայտումը համաձայն «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումների:

Այսպես, համաձայն «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի՝

Հոդված 23. Հանրային ծառայողի և բարձրաստիճան պաշտոնատար անձի նկատմամբ կիրառվող սահմանափակումները

...Սույն օրենքի 32-րդ հոդվածով նախատեսված գույքի և եկամուտների հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձինք պարտավոր են դրամական միջոցներով փոխառություն հանձնելը կամ ստանալը, հանձնած կամ ստացած դրամական միջոցներով փոխառության դիմաց վճարներ (տոկոսներ կամ այլ հատուցում) հանձնելը կամ ստանալը, դրամական միջոցներ նվիրատվություն ստանալը, դրամական միջոցներով արտահայտված շահաբաժիններ ստանալը, ձեռնարկարկրական գործունեությունից եկամուտ ստանալը, գույքը օտարելուց եկամուտ ստանալը, վարձակալության դիմաց վճար կամ այլ հատուցում ստանալը, քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից եկամուտ ստանալը, վճարներ ստանալը, գույքային իրավունքներից եկամուտ ստանալը կատարել բացառապես անկանխիկ ձևով, եթե միանվագ ստացվող կամ տրվող գումարը գերազանցում է 2.000.000 Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

Հոդված 32. Գույքի, եկամուտների, շահերի և փոխկապակցված անձանց մասին հայտարարագրման պարտականությունը

(վերնագիրը խմբ. 09.06.17 ՀՕ-98-Ն)

1. Սույն օրենքի իմաստով՝ հայտարարագրու պաշտոնատար անձինք են բարձրաստիճան պաշտոնատար անձինք, ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնատար անձ չհանդիսացող քաղաքացիական ծառայության բարձրագույն պաշտոններ զբաղեցնող անձինք, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության բարձրագույն պաշտոններ զբաղեցնող անձինք, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարը և աշխատակազմի առանձնացված ստորաբաժանման ղեկավարը, Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում ծառայության, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի դեպարտամենտի պետական ծառայության բարձրագույն խմբի պաշտոններ զբաղեցնող անձինք, Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության աշխատակազմի ղեկավարը և նրա տեղակալը, Հայաստանի Հանրապետության նախարարությունների կառավարման ոլորտում գործող պետական մարմինների ղեկավարները և նրանց տեղակալները, դատական ծառայության բարձրագույն խմբի պաշտոններ զբաղեցնող անձինք, **հատուկ ծառայությունների բարձրագույն և գլխավոր պաշտոններ զբաղեցնող անձինք**, բացառությամբ պաշտպանության, ազգային անվտանգության հանրապետական գործադիր մարմիններում և փրկարար ծառայությունների գլխավոր պաշտոններ զբաղեցնող անձանց, քրեակարարողական և դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունների գլխավոր պաշտոններ զբաղեցնող անձինք, դատախազները, ազգային անվտանգության մարմինների, հարկային, մաքսային ծառայությունների, քննչական կոմիտեի և հատուկ քննչական ծառայության քննիչները,

15 000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ղեկավարները, Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարները, գնումների բողոքարկման խորհրդի անդամները:

(32-րդ հոդվածի 1-ին մասը 23.03.18 ՀՕ-206-Ն օրենքի 54-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն գործում է մինչև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կազմավորման պահը:)

Սույն սահմանադրական վեճի լուծման համար անհրաժեշտ է պարզել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի, մասնավորապես՝ վերը նշված դրույթների փոփոխությունների և լրացումների կատարման և ժամանակի մեջ դրանց կիրառման վերաբերյալ իրավակարգավորումների բովանդակությունը:

Այսպես, «Հանրային ծառայության մասին» ՀՕ-172-Ն ՀՀ օրենքն ընդունվել է 2011 թվականի մայիսի 26-ին և ուժի մեջ է մտել 01.01.2012թ.:

Նշված օրենքը մասնակի ուժը կորցրել է 23.03.18 ՀՕ-206-Ն ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, որն ուժի մեջ է մտել 09.04.2018թ.:

Համաձայն «Հանրային ծառայության մասին» ՀՕ-206-Ն ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի՝

Հոդված 54. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը, բացառությամբ 31-33-րդ հոդվածների, 34-րդ հոդվածի 1-12-րդ մասերի, 35-40-րդ հոդվածների, 41-րդ հոդվածի 1-8-րդ մասերի, 43-րդ հոդվածի 1-ին մասի, 2-րդ մասի երկրորդ նախադասության, 3-5-րդ մասերի:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մայիսի 26-ի ՀՕ-172-Ն օրենքը, բացառությամբ 23-24-րդ, 28-րդ, 30-37-րդ հոդվածների, 38-րդ հոդվածի 3-րդ մասի, 4-րդ մասի առաջին նախադասության, 38.1-40-րդ, 41-րդ հոդվածի 1-ին մասի, 41.1-44-րդ հոդվածների, 52-րդ հոդվածի 5-րդ մասի:

3. Սույն օրենքի 31-33-րդ հոդվածները, 34-րդ հոդվածի 1-ին մասն ուժի մեջ են մտնում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կազմավորման պահից: Մինչ այդ շարունակում են գործել «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մայիսի 26-ի ՀՕ-172-Ն օրենքի 23-24-րդ, 30-31-րդ հոդվածների, 32-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները:

4. Սույն օրենքի 34-րդ հոդվածի 2-12-րդ մասերը, 35-40-րդ հոդվածները, 41-րդ հոդվածի 1-8-րդ մասերը, 43-րդ հոդվածի 1-ին մասը, 2-րդ մասի երկրորդ նախադասությունը, 3-5-րդ մասերն ուժի մեջ են մտնում 2019 թվականի հունվարի 1-ից: Մինչ այդ շարունակում են գործել «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մայիսի 26-ի ՀՕ-172-Ն օրենքի 32-րդ հոդվածի 2-7-րդ մասերի, 32.1-37-րդ հոդվածների դրույթները:

5. Սույն օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասում հիշատակված վարքագծի կանոնագիրքը, ինչպես նաև հանրային ծառայողների վարքագծի փրկային կանոններն ընդունվում (սահմանվում) են մինչև 2018 թվականի հոկտեմբերի 1-ը: Քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնները սահմանվում են մինչև 2018 թվականի նոյեմբերի

1-ը: Մինչ այդ շարունակում են գործել «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մայիսի 26-ի ՀՕ-172-Ն օրենքի 28-րդ հոդվածի դրույթները:

6. «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մայիսի 26-ի ՀՕ-172-Ն օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասը, 4-րդ մասի առաջին նախադասությունը, 39-40-րդ հոդվածները, 41-րդ հոդվածի 1-ին մասը, 41.1-44-րդ հոդվածները, 52-րդ հոդվածի 5-րդ մասը շարունակում են գործել մինչև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կազմավորումը:

7. «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մայիսի 26-ի ՀՕ-172-Ն օրենքի 38.1-ին և 38.2-րդ հոդվածները շարունակում են գործել մինչև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի աշխատակազմի ձևավորումը:

Համաձայն «Հանրային ծառայության մասին» ՀՀ ՀՕ-206-Ն օրենքի 60-րդ հոդվածի 2-րդ մասի՝

2. Մինչև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կազմավորումը Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մայիսի 26-ի ՀՕ-172-Ն օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասում նշված «Բարձրաստիճան պաշտոնատար անձ» բառերի փոխարեն (սուբյեկտային կազմի առումով) կարդալ. «Հանրապետության նախագահը, վարչապետը, Ազգային ժողովի պարզամավորները, Սահմանադրական դատարանի դատավորները, դատավորները, նախարարները և նրանց տեղակալները, Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետը և նրա տեղակալները, գլխավոր դատախազը և նրա տեղակալները, մարզերի, Երևան քաղաքի և կայազորների դատախազները, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահը և նրա տեղակալները, Հայաստանի Հանրապետության հափուկ քննչական ծառայության պետը և նրա տեղակալները, ինքնավար և անկախ պետական մարմինների ղեկավարները, նրանց տեղակալները և անդամները, Կենտրոնական բանկի նախագահը, նրա տեղակալները և Կենտրոնական բանկի խորհրդի անդամները, Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի ղեկավարը և նրա տեղակալները, Պետական գույքի կառավարման կոմիտեի ղեկավարը և նրա տեղակալները, Կառավարությանը ենթակա մարմինների ղեկավարները, նրանց տեղակալները, բացառությամբ տեսչական մարմինների ղեկավարների և նրանց տեղակալների, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության պետը և նրա տեղակալները, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության ղեկավարը և նրա տեղակալները, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության տնօրենը և նրա տեղակալները, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի գլխավոր հարկադիր կատարողը և նրա տեղակալները, վարչապետին ենթակա մարմինների ղեկավարները, նրանց տեղակալները, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանը, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի դեպարտամենտների ղեկավարները,

Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարը և նրա տեղակալները, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարը և նրա տեղակալները, վարչապետի աշխատակազմի ղեկավարը և նրա տեղակալները, Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարը, Երևանի քաղաքապետը և նրա տեղակալները, մարզպետները և նրանց տեղակալները, օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմինների ղեկավարները, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարը, գլխավոր ռազմական տեսուչը և նրա տեղակալները, հատուկ հանձնարարություններով դեսպանը, Հանրապետության նախագահի խորհրդականները, մամուլի քարտուղարը և օգնականները, Ազգային ժողովի նախագահի խորհրդականները և օգնականները, վարչապետի խորհրդականները և օգնականները, նախորդ տարվա հունվարի 1-ի դրությամբ 50 000 և ավելի բնակիչ ունեցող համայնքների ղեկավարները:

«Հանրային ծառայության մասին» ՀՕ-172-Ն ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 15-րդ կետում թվարկված է բարձրաստիճան պաշտոնատար անձ հանդիսացող սուբյեկտների շրջանակը, որի համաձայն՝

15) բարձրաստիճան պաշտոնատար անձ՝ Հանրապետության Նախագահը, վարչապետը, Ազգային ժողովի պատգամավորները, սահմանադրական դատարանի անդամները, դատավորները, նախարարները և նրանց տեղակալները, գլխավոր դատախազը և նրա տեղակալները, մարզերի, Երևան քաղաքի և կայազորների դատախազները, օրենքներով ստեղծված պետական մարմինների ղեկավարները, նրանց տեղակալները և այդ մարմինների անդամները, կենտրոնական բանկի նախագահը, նրա տեղակալը և կենտրոնական բանկի խորհրդի անդամները, կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների ղեկավարները, նրանց տեղակալները, վերահսկիչ պալատի նախագահը, նրա տեղակալը, խորհրդի անդամները, Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարը և նրա տեղակալները, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարը և նրա տեղակալները, սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարը, կառավարության աշխատակազմի ղեկավարը և նրա տեղակալները, բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի անդամները, Երևանի քաղաքապետը և նրա տեղակալները, մարզպետները և նրանց տեղակալները, օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմինների ղեկավարները, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարը, Հանրապետության Նախագահի խորհրդականները և օգնականները, Ազգային ժողովի նախագահի խորհրդականները և օգնականները, վարչապետի խորհրդականները և օգնականները, նախորդ տարվա հունվարի 1-ի դրությամբ 50000 և ավելի բնակիչ ունեցող համայնքների ղեկավարները, ինչպես նաև Հանրապետության Նախագահի վերահսկողական ծառայության ղեկավարը, վարչապետի վերահսկողական ծառայության ղեկավարը:

«Հանրային ծառայության մասին» ՀՕ-172-Ն ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 15-րդ կետը փոփոխվել է 12.12.2013թ. ՀՕ-174-Ն օրենքով, որով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության պետական պահպանության ծառայության պետը և նրա

տեղակալները համարվել է բարձրաստիճան պաշտոնատար անձ: Մասնավորապես, համաձայն նշված փոփոխության՝

1) 15-րդ կետը «նախարարները և նրանց տեղակալները,» բառերից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետը և նրա տեղակալները,» բառերով, «կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների ղեկավարները, նրանց տեղակալները» բառերից հետո՝ «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության պետական պահպանության ծառայության պետը և նրա տեղակալները, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակարարողական ծառայության պետը և նրա տեղակալները, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության տնօրենը և նրա տեղակալները, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի գլխավոր հարկադիր կարարողը և նրա տեղակալները, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանը» բառերով, «Հանրապետության Նախագահի խորհրդականները» բառերից հետո՝ «, գլխավոր ռազմական տեսուչը և նրա տեղակալները, հատուկ հանձնարարություններով դեսպանը, մամուլի քարտուղարը» բառերով, նույն կետից հանել «կառավարության աշխատակազմի ղեկավարը և նրա տեղակալները» բառերը:

Հարկ է նկատել, որ նշված դրույթը 2018թ. ապրիլի 9-ից ուժը կորցրել է «Հանրային ծառայության մասին» ՀՕ-206-Ն ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի ուժով:

Պետք է նշել նաև, որ ՀՕ-98-Ն ՀՀ օրենքով «Հանրային ծառայության մասին» ՀՕ-172-Ն ՀՀ օրենքի 32-րդ հոդվածը շարադրվել է նոր խմբագրությամբ, սակայն ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության պետական պահպանության ծառայության պետի առաջին տեղակալի պաշտոնը զբաղեցնող անձը շարունակել է հանդիսանալ եկամուտների հանձնարարագիր ներկայացնելու պարտականություն կրող բարձրաստիճան պաշտոնատար անձ:

**Հոդված 32. Գույքի, եկամուտների, շահերի և փոխկապակցված անձանց մասին հայտարարագրման պարտականությունը
(վերնագիրը խմբ. 09.06.17 ՀՕ-98-Ն)**

1. Սույն օրենքի իմաստով՝ հայտարարագրու պաշտոնատար անձինք են բարձրաստիճան պաշտոնատար անձինք, ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնատար անձ չհանդիսացող քաղաքացիական ծառայության բարձրագույն պաշտոններ զբաղեցնող անձինք, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության բարձրագույն պաշտոններ զբաղեցնող անձինք, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարը և աշխատակազմի առանձնացված ստորաբաժանման ղեկավարը, Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում ծառայության, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի դեպարտամենտի պետական ծառայության բարձրագույն խմբի պաշտոններ զբաղեցնող անձինք, Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության աշխատակազմի ղեկավարը և նրա տեղակալը,

Հայաստանի Հանրապետության նախարարությունների կառավարման ոլորտում գործող պետական մարմինների ղեկավարները և նրանց տեղակալները, դատական ծառայության բարձրագույն խմբի պաշտոններ զբաղեցնող անձինք, **հատուկ ծառայությունների բարձրագույն և գլխավոր պաշտոններ զբաղեցնող անձինք**, բացառությամբ պաշտպանության, ազգային անվտանգության հանրապետական գործադիր մարմիններում և փրկարար ծառայությունների գլխավոր պաշտոններ զբաղեցնող անձանց, քրեակադրոհական և դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունների գլխավոր պաշտոններ զբաղեցնող անձինք, դատախազները, ազգային անվտանգության մարմինների, հարկային, մաքսային ծառայությունների, քննչական կոմիտեի և հատուկ քննչական ծառայության քննիչները, 15 000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ղեկավարները, Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարները, գնումների բողոքարկման խորհրդի անդամները:

(32-րդ հոդվածի 1-ին մասը 23.03.18 ՀՕ-206-Ն օրենքի 54-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն գործում է մինչև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կազմավորման պահը:)

Այսպիսով, վերոնշյալ իրավակարգավորումներից հետևում է, որ մինչև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կազմավորումը հայտարարատու պաշտոնատար անձանց շրջանակն ու դրա հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Հանրային ծառայության մասին» ՀՕ-172-Ն ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով, որի 1-ին մասը գործելու է մինչև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ձևավորումը, իսկ 2-7-րդ մասերը՝ մինչև 2019թ. հունվարի 1-ը: Հետևաբար, ՀՀ քրեական օրենսգրքի 310.1 և 314.3 հոդվածներում հայտարարատու պաշտոնատար անձ հասկացությունը գործի քննության ժամանակ պետք է մեկնաբանվի համաձայն նշված օրենքի:

Սակայն, ինչպես արդեն նշել ենք, հետագա օրենսդրական փոփոխությունների արդյունքում հայտարարատու պաշտոնատար անձանց ցանկը ենթարկվել է փոփոխության, և այդ ցանկից հանվել է ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության պետական պահպանության ծառայության տեղակալի պաշտոնը զբաղեցնող անձը՝ համաձայն «Հանրային ծառայության մասին» ՀՕ-206-Ն ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 2-րդ մասի: Ուստի, 2018թ. ապրիլի 9-ից քննարկվող պաշտոնատար անձը չի հանդիսացել բարձրաստիճան պաշտոնատար անձ և հայտարարատու կամ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ, հետևաբար նաև՝ ՀՀ քրեական օրենսգրքի քննարկվող հոդվածներով նախատեսված հանցակազմերի հատուկ սուբյեկտ:

Սույն գործի հանգամանքներով ՀՀ ԿԱ Ազգային անվտանգության ծառայության պետական պահպանության ծառայության պետի առաջին տեղակալի պաշտոնը զբաղեցնող անձը՝ սույն գործով Դիմողը, մինչև «Հանրային ծառայության մասին» ՀՕ-206-Ն ՀՀ օրենքի ուժը կորցնելը՝ 2018թ. ապրիլի 8-ը, համարվել է բարձրաստիճան պաշտոնատար անձ:

«Հանրային ծառայության մասին» ՀՕ-206-Ն ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով սահմանված կարգով և 33-րդ հոդվածով սահմանված ժամկետներում բարձրաստիճան

պաշտոնատար անձինք բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով են ներկայացնում գույքի, եկամուտների հայտարարագրեր:

Ըստ անհատական սահմանադրական դիմումում շարադրված գործի հանգամանքների՝ Դիմողը, 2008թ. մինչև 2018թ. մայիսի 17-ը զբաղեցրել է ՀՀ ԿԱ Ազգային անվտանգության ծառայության պետական պահպանության ծառայության պետի առաջին տեղակալի պաշտոնը, որն ազգային անվտանգության մարմիններում ծառայողների գլխավոր խմբի պաշտոն է՝ համաձայն «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, որը սահմանում է.

«Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝

1. Ազգային անվտանգության մարմինների ծառայողների պաշտոնները դասակարգվում են հետևյալ խմբերի.

*2) ազգային անվտանգության մարմինների ծառայողների գլխավոր պաշտոններ՝ պետական լիազոր մարմնի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների (դեպարտամենտ, գլխավոր վարչություն, վարչություն, բաժին և այլն) պետեր և նրանց տեղակալներ, **պետական պահպանության ծառայության պետի տեղակալներ.:***

Ըստ դիմումի՝ Դիմողը մինչև 2018թ. մարտի 30-ը չի ներկայացրել 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գույքի և եկամուտների հայտարարագիր, այլ այն ներկայացրել է միայն 2018թ. ապրիլի 9-ից հետո՝ 2018թ. մայիսի 21-ին: 2018թ. մայիսի 17-ին պաշտոնական պարտականությունները դադարելուց հետո Դիմողը գույքի և եկամուտների հայտարարագիր է ներկայացրել 2018թ. մայիսի 17-ին:

Ինչպես արդեն նշել ենք, ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի համաձայն՝

Հոդված 72. Հանցագործություններ սահմանելիս և պատիժներ նշանակելիս օրինականության սկզբունքը

*Ոչ ոք չի կարող դատապարտվել այնպիսի գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին հանցագործություն չի հանդիսացել: Չի կարող նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը ենթակա էր կիրառման հանցանք կատարելու պահին: **Արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ: (Ընդգծումը մերն է՝ Գ.Կ.)***

ՀՀ սահմանադրական դատարանն անդրադառնալով նշված սահմանադրական նորմին իր 14.02.2017 թիվ ՍԴՈ-1348 որոշման մեջ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«6. ...

Սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակներում Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ հիշյալ դրույթի բովանդակությանը և դրա համադրեքստում քննարկել արարքի պատժելիությունը վերացնող օրենքը հետադարձությամբ կիրառելու արդյունքում դատական ակտի վերանայման խնդիրը: Այդ կապակցությամբ Սահմանադրական դատարանը գտնում է, որ.

առաջին՝ սահմանադիրն արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքների համար նախատեսում է վերջիններիս՝ ժամանակի մեջ գործողության հատուկ կարգ, այն է՝ այդպիսի օրենքները փարածվում են մինչ այդ օրենքների ուժի մեջ մտնելը ծագած համապատասխան հարաբերությունների վրա,

երկրորդ՝ ի տարբերություն անձի վիճակը բարելավող այլ օրենքների, սահմանադիրն արարքի պատժելիությունը վերացնող օրենքի հետադարձությունը չի պայմանավորում վերջինիս՝ այդ օրենքներով նախատեսված լինելու հանգամանքով,

երրորդ՝ անմիջական գործողությամբ օժտված սահմանադրաիրավական վերոհիշյալ դրույթով ամրագրված իրավակարգավորման շրջանակներում **սահմանադիրն արարքի պատժելիությունը վերացնող օրենքը հետադարձությամբ կիրառելու պահանջը փարածում է քրեադատավարական և քրեակարարողական բոլոր գործընթացներում ներգրավված, ի թիվս այլոց, այն անձանց վրա, ում արարքի պատժելիությունը վերացվել է, և սահմանադրաիրավական այս սկզբունքի գործողությունը չի պայմանավորում քրեադատավարական կամ քրեակարարողական այս կամ այն փուլով, ինչն արտացոլվել է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասում, որի համաձայն՝ արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, **այսինքն՝ փարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն,****

չորրորդ՝ ելնելով մարդու արժանապատվության անխախտելիության և մարդու անօտարելի արժանապատվության՝ իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմք հանդիսանալու սահմանադրաիրավական պահանջներից և հիմնական իրավունքների անմիջականորեն գործողության սկզբունքից՝ անձի նկատմամբ **արարքի պատժելիությունը վերացնող օրենքը հետադարձությամբ կիրառելը ենթադրում է, որ վերանում են արարքի պատժելիություն սահմանող օրենքի կիրառման արդյունքում անձի համար առաջացած բոլոր անբարենպաստ իրավական հետևանքները, այսինքն՝ անձի նկատմամբ արարքի պատժելիությունը վերացնող օրենքի հետադարձ կիրառումը վերականգնվում է մինչև արարքի պատժելիություն սահմանող օրենքի կիրառումն առկա վիճակը,**

հինգերորդ՝ արարքի պատժելիությունը վերացնող օրենքի կիրառումը պետք է իրականացվի դատարանի կողմից արարքի համար պատիժ սահմանող օրենքի կիրառմամբ ընդունված դատավճռի վերանայման միջոցով:

Արարքի պատժելիությունը վերացնող օրենքի հետադարձ ուժի կիրառումն ապահովելու վերաբերյալ իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ արարքի պատժելիության վերացումը ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից /տես՝ ՀՀ վճռաբեկ դատարանի 05.11.2010թ. ԼԴ/0286/01/09 որոշումը/ գնահատվում է որպես արարքի մեջ հանցակազմի բացակայություն, ինչը ենթադրում է, որ ապաքրեականացված արարքի փաստով քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման՝ հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի պահանջները: Հատկանշական է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի հիշյալ իրավական դիրքորոշումը վերաբերելի է միայն քրեական գործով մինչդատարան և դատարան վարույթների շրջանակներում անձի նկատմամբ արարքի

պատժելիությունը վերացնող օրենքը հետադարձությամբ կիրառելու հարցին: Ընդ որում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համակարգային վերլուծությունը վկայում է այն մասին, որ քրեական գործով մինչդատական վարույթի շրջանակներում հիշյալ օրենքի կիրառումն իրականացվում է քրեական հետապնդման մարմնի՝ քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու, առաջադրված մեղադրանքը վերացնելու կամ մեղադրանքից հրաժարվելու մասին որոշումներով, իսկ դատական վարույթի շրջանակներում՝ դատարանի՝ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշմամբ,

վեցերորդ՝ Սահմանադրության վերոհիշյալ դրույթից բխում է, որ արարքի պատժելիությունը վերացնող օրենքի կիրառման արդյունքում դատարանի կողմից **դատավճռի վերանայման հիմքն արարքի պատժելիությունը վերացնող օրենքի ուժի մեջ մտնելու հանգամանքն է,**

յոթերորդ՝ պատիժը վերացնող օրենքը հետադարձությամբ կիրառելն անմիջականորեն առնչվում է անձի այնպիսի հիմնական իրավունքներին, ինչպիսիք են դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները, և **ինչպես հանցագործություններ սահմանելու և պատիժներ նշանակելու, այնպես էլ արարքի պատժելիությունը վերացնելու գործընթացները պետք է հիմնված լինեն ոչ միայն ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածով ամրագրված՝ հանցագործություններ սահմանելիս և պատիժներ նշանակելիս օրինականության սկզբունքի, այլ նաև հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության, հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համաչափության և որոշակիության սահմանադրաիրավական պահանջների անմիջական գործողության ապահովման վրա, քանի որ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:**

ՀՀ սահմանադրականի դատարանի 29.11.2011 թ. թիվ ՍԴՈ-1000 որոշման համաձայն՝

«Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքի հետադարձ ուժի հանգամանքը պայմանավորված է Սահմանադրությամբ օժտված իրավունքի ուժով, ինչպես նաև ՀՀ միջազգային պարտավորություններով և օրենսդրի որևէ հայեցողություն չի ենթադրում»:

Գտնում ենք, որ մեջբերված սահմանադրական նորմի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը լիովին կիրառելի է սույն գործի հանգամանքների նկատմամբ: Բանն այն է, որ ՀՀ սահմանադրական դատարանը, ելնելով արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքի հետադարձության սկզբունքից, ինչպես վերևում մեջբերել ենք, սահմանել է, որ **սահմանադիրն արարքի պատժելիությունը վերացնող օրենքը հետադարձությամբ կիրառելու պահանջը տարածում է քրեադատավարական և քրեակադրաբանական բոլոր գործընթացներում ներգրավված, ի թիվս այլոց, այն անձանց վրա, ում արարքի պատժելիությունը վերացվել է:** Սույն սահմանադրական վեճի առարկան հանդիսացող գործի

հանգամանքներով ՀՀ ԿԱ Ազգային անվտանգության ծառայության պետական պահպանության ծառայության պետի առաջին տեղակալի պաշտոնը զբաղեցնող անձի (հանցագործության հատուկ սուբյեկտի) արարքի, այն է՝ *անհիմն հարստանալու և հայտարարագրերում կեղծ տվյալ ներկայացնելու կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելու* պատժելիությունը վերացվել է, քանի որ նշված պաշտոնը զբաղեցնող անձը օրենսդրական փոփոխությունների արդյունքում դադարել է հանդիսանալ հայտարարատու կամ եկամուտների հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ: Ուստի, արարքի պատժելիությունը վերացնող օրենքի հետադարձելիության սկզբունքի կիրառման ուժով նշված անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության:

Այսպիսի մոտեցումը համահունչ է նաև մի շարք միջազգային փաստաթղթերով ամրագրված իրավական կարգավորումներին:

Այսպես, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 11-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ՝ «Ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ քրեական հանցագործության համար՝ կապված ցանկացած գործողության կամ անգործության հետ, որը, կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն, քրեական հանցագործություն չի համարվել: Չի կարող նաև կիրառվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառելի է եղել քրեական հանցագործության կատարման պահին»:

Միաժամանակ, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում (հոդվ. 15), Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայում (հոդվ. 7, մաս 1) և միջազգային իրավական այլ փաստաթղթերում ևս անդրադարձ է արվել խնդրո առարկա հարցերի կարգավորմանը՝ նախատեսելով, որ արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող քրեական օրենքն ունի հետադարձ ուժ: Ընդ որում, քրեական օրենքի հետադարձ ուժի այս բացառությունը հիմնված է “*nullum crimen, nulla poena sine lege*” (չկա հանցագործություն, չկա պատիժ առանց օրենքի) սկզբունքի վրա:

Չնայած Եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին մասն անմիջականորեն առավել մեղմ պատժի վերաբերյալ քրեական օրենքի հետադարձ ուժի կիրառման մասին է, սակայն Եվրոպական դատարանը իր նախադեպային որոշումներով արձանագրել է, որ նշված հոդվածը երաշխավորում է առավել մեղմ քրեական օրենքի կիրառման սկզբունքը:

Այդ սկզբունքը նշանակում է, որ եթե կա տարբերություն հանցանքի կատարման ժամանակ գործող և մինչև վերջնական դատական ակտի կայացումը գործող քրեական օրենքների միջև, դատարանները պետք է կիրառեն այն քրեական օրենքը, որի դրույթներն առավել բարենպաստ են պաշտպանյալի համար (Case of *Scoppola v Italy*, App. no. 10249/03, 17 September 2009, para. 109):

Սա նշանակում է, որ Եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ չնայած հանցանքի կատարման պահին գործող օրենքին համապատասխան որոշակի անձի կողմից որոշակի արարքի կատարումը համարվում է հանցագործություն, որը սակայն ապաքրեականացվել է քրեական գործի քննության

ժամանակ գործող օրենքով, ապա, ըստ եվրոպական դատարանի նախադեպային որոշումների, անձի նկատմամբ կիրառման է ենթակա առավել բարենպաստ՝ քրեական պատասխանատվություն չնախատեսող քրեական օրենքը: Այսինքն՝ այդ դեպքում անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության “nullum crimen, nulla poena sine lege” (չկա հանցագործություն, չկա պատիժ առանց օրենքի) սկզբունքով:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 310.1-րդ հոդվածի 1-ին մասի և 314.3-րդ հոդվածի դրույթներին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության Սահմանադրությանը համապատասխանությունը խնդրահարույց է:

Համակարգող՝

Լյուդվիկ Դավթյան